ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
2016 թվականի ներդրումային գործունեության
մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ 2017

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան……3

ԲԱԺԻՆ 1.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները……4

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը……4

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները……5

ԲԱԺԻՆ 2.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները ……6

Տրանսպորտային միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ……6

ԲԱԺԻՆ 3.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը……6

Հղումներ օգտագործված նյութերին……8

ՆԱԽԱԲԱՆ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է ի կատարումն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 14-ի №399Լ որոշումով հաստատված 2017 թվականի աշխատանքային ծրագրի 20-րդ կետի և արտացոլում է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև Ընկերություն) 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի գնահատականը: Վերլուծական տեղեկանքում ներկայացված է Ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրի փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների համադրությունը, դրանց արդյունավետության վերլուծությունը, ինչպես նաև սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը: Վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով Ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագիրը (այսուհետ՝ Ներդրումային ծրագիր) [Որոշում 1, Որոշում 2] և վերջինիս կողմից հանձնաժողով ներկայացված փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների վերաբերյալ հաշվետվությունը [Հաշվետվություն]:

ԲԱԺԻՆ 1.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2016 թվականի Ներդրումային ծրագրի կառուցվածքը և կատարման ցուցանիշները

1.1 Ներդրումային ծրագրի կառուցվածքը

Ընկերությունը հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացրել երկու ներդրումային ծրագիր: ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №445Ա որոշմամբ հաստատված Ներդրումային ծրագրով նախատեսված էր ներդրումներ իրականացնել տրանսպորտային միջոցների փոխարինման ուղղությամբ՝ 316,0 մլն դրամ ծավալով: Իսկ 2016 թվականի փետրվարի 24-ի №27Ա որոշմամբ հաստատված Ներդրումային ծրագրով նախատեսված էր իրականացնել կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանն և հիմնական միջոցների ձեռքբերմանն ուղղված ներդրումներ՝ 1 537,2 մլն դրամ ծավալով: Ներդրումային ծրագրերի ընդհանուր ծավալը կազմել է 1 853,2 մլն դրամ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է Ընկերության Ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է Գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 1 537,2 մլն դրամ, նախատեսված էր կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման և հիմնական միջոցների փոխարինման ուղղությամբ, իսկ 316,0 մլն դրամ՝ տրանսպորտային միջոցների ձեռքբերման ուղղությամբ:

1.2 Ներդրումային ծրագրի կատարման ցուցանիշները

Համաձայն ներկայացված Հաշվետվության՝ 2016 թվականի ընթացքում ձեռք են բերվել և շահագործման են հանձնվել 275,1 մլն դրամի հիմնական միջոցներ:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ համաձայնեցված 2016-2017 թվականների ներդրումների կանխատեսվող ծավալը		2016 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրում-ային ծրագրի կատարման ցուցանիշը, 2016թ
		հազար դրամ	%	հազար դրամ	%	%
1	Կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանն և հիմնական միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ	1 537.2	82.9%	-	-	-
2	Տրանսպորտային միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ	316.0	17.1%	275.1	100%	87.1%
3	**Ընդամենը**	**1 853.2**	**100%**	**275.1**	**100%**	**14.8%**

Համաձայն Հաշվետվության, 2016 թվականի ընթացքում Ընկերությունը կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման և հիմնական միջոցների փոխարինման ուղղությամբ ներդրումներ չեն իրականացվել: Իսկ տրանսպորտային միջոցների փոխարինման ուղղությամբ նախատեսված ներդրումներն իրականացվել են ամբողջ քանակությամբ, միևնույն ժամանակ հիմնական միջոցները ձեռք են բերվել համաձայնեցվածից ցածր գներով:

Արդյունքում Ընկերությունը 2016 թվականի ընթացքում իրականացրել է Ներդրումային ծրագրի 17,1%-ը:

ԲԱԺԻՆ 2.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 2016 թվականի ներդրումային գործունեության մոնիթորինգի արդյունքները

2.1 Տրանսպորտային միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ

Ընկերության Ներդրումային ծրագրի շրջանակում այս ուղղությամբ նախատեսվում էր 316,0 մլն դրամով ձեռք բերել օպերատիվ և ուղևորատար

ավտոմեքենաներ: Հաշվետվության համաձայն նշված ուղղությամբ ձեռքբերումներին ուղղվել է 275,1 մլն դրամ:

Ընկերությունը 2016 թվականի ընթացքում օպերատիվ ավտոմեքենաների ձեռքբերման ենթաուղղությամբ համաձայնեցված ծավալների շրջանակում ձեռք է բերել 6 ավտոբուս՝ 53,6 մլն դրամ ընդհանուր արժեքով և 3 միկրոավտոբուս՝ 19,3 մլն դրամ ընդհանուր արժեքով: Ուղևորատար ավտոմեքենաների ձեռքբերման ենթաուղղությամբ համաձայնեցված ծավալների շրջանակում ձեռք են բերվել 6 ավտոբուս՝ 169,1 մլն դրամ, 2 միկրոավտոբուս՝ 27,1 մլն դրամ, և մեկ մարդատար մեքենա՝ 6,0 մլն դրամ ընդհանուր արժեքներով:

Հարկ է նշել, որ բոլոր ձեռքբերումներն իրականացվել է Ներդրումային ծրագրով նախատեսված գներից ցածր գներով:

2.2 Կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացմանն և հիմնական միջոցների փոխարինմանն ուղղված ներդրումներ

Ընկերությունը 2016 թվականի ընթացքում Ընկերությունը կայանի անվտանգության և հուսալիության մակարդակի բարձրացման և հիմնական միջոցների փոխարինման ուղղությամբ ներդրումներ չի իրականացրել:

ԲԱԺԻՆ 3.
«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

Սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի որոշման նպատակով վերլուծության ընթացքում իրականացվել են հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալների համադրում:

Հաշվի առնելով մոնիթորինգի արդյունքները և այն, որ Ընկերության կողմից 2016 թվականին իրականացված և շահագործման հանձնված ներդրումներն ամբողջությամբ իրականացվել են Ներդրումային ծրագրով համաձայնեցված

ուղղությունների և ծավալների շրջանակում, ուստի 2016 թվականին իրականացված և ավարտված 275,1 մլն դրամ ներդրումներն ամբողջ ծավալով հաշվի կառնվեն ընկերության սակագնով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում:

Ստորև՝ աղյուսակ 2-ում ներկայացված է Ընկերության կողմից 2016 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալի գնահատականը:

Աղյուսակ 2
(մլն դրամ)

1	2016 թվականի ներդրումային ծրագրով համաձայնեցված ներդրումների ընդհանուր ծավալը	**1 853.2**
2	2016 թվականի ընթացքում իրականացված և ավարտված ներդրումների ծավալը	**275.1**
3	**2016 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**275.1**

Հղումներ օգտագործված նյութերին

Որոշում 1	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 23-ի №445Ա որոշումը «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»
Որոշում 2	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 24-ի №27Ա որոշումը «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի ներդրումային ծրագրին համաձայնություն տալու մասին»
Հաշվետվություն	«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 2016 թվականին փաստացի կատարված կապիտալացվող ծախսերով ձևակերպված ներդրումների մասին Ընկերության 2017 թվականի փետրվարի 22-ի №21-422 գրությամբ ներկայացված հաշվետվություն